յիշատակարանները, որոնք ոչ միայն Թովմայի կեանքի այլ և այլ կողմերն են լուսաբանում, այլ և պատմական և մատենագրական երևոյթներ։ Այդ յիշատակարաններից մի քանիսի մէջ նկարագրուած են նոյն իրողութիւնները, ինչ որ և Լանկթամուրի պատմութեան մէջ, բայց միշտ նոր գծերով և մանրամասնութիւններով։ Ներկայիս հրատարակում ենք այստեղ մեր մատենադարանի **№№ 2065, 1380, 3892** *և Երուսաղէմի* **№ 149** *ձեռագրների յիշատակարանները (Դ. Ե. Է և Գ. Նոր Նիւթերի մէջ. միւսները ուրիշների գրածն են, բայց Թովմայի մասին տեղեկութիւններով)։ Գ. յիշատարանն օրինակ, գրուած ՊԾԹ (=1410) թուին,* κατ' ἐξοχήν *պատմական-մատենագրական է Տաթևացու կեանքի վերջին տարուայ վարժապետական և գրական գործունէութեան, Թովմայի վարդապետական աստիճան ստանալու և նորա հոգևոր և մարմնաւոր հարազատների մասին տուած տեղեկութիւններով։ Նոյնպէս շատ կարևոր է Ե-ով նշանակուած յիշատակարանների խումբը (№ 1403/1380) Թովմայի հոգևոր և մարմնաւոր հարազատների, Շահռուհի և Սքանդարի և իւր փախստեան մասին դէպի Բաղէշի կողմերը և՛ն։ Բայց մեր հաւաքածներով չի սահմանափակւում Թովմայի յիշատակարանների թիւը. Նա իւր ժամանակի յայտնի «քաջ քարտուղար»-ներից կամ գրիչներից մէկն էր և գրչութեան ուսուցիչ. իւր արտագրած ձեռագրների վերջում անշուշտ թողել է յիշատակարաններ*, որոց նմուշներն ունինք ձեռքի տակ։ Պէտք է հետամուտ լինել, երևան հանել և մատչելի դարձնել հայ բանասիրութեան։ Հէնց այս տողերը գրուած էին և յանձնուած տպագրութեան, երբ մեր ձեռքն ընկաւ № 558/590 ձեռագիրը, արտագրուած Թովմայի պատրաստած օրինակից, «ձեռամբ յոգնամեղ և բազմավէր ոգոյ Յոհան գրչի Սրեցոյ»։ Կիրակոս Բանասէրից գիտէինք, թէ Թովման «գրեաց ընտիր և անսղալ աղուեթամատոյց և մեկնիչք և տաւնացոյց ի լաւ օրինակաց»։ Եւ ահա այս ձեռագիրը և նորա մէջ պահուած Թովմայի յիշատակարանը** մեզ լիովին տեղեկութիւն են տալիս այդ մասին։ Յիշա-*

---

* Տաշեան. Ցուցակ, 755. Թովման 1454 թուին գրել է Աստուածաբանի «Բ՟ս ծնեալ» ճառի մեկնութեան որոշ մասերը եւ համառօտ յիշատակարան աւելացրել վերջում։ Թովմայի գիրը տես «Նշդակաթ» հայագիտական ժողովածու Ա. Գիրք, մեր աշխատութիւնը. «Բարտէզ հայ հնագրութեան», Տախտակ ՉԲ. պատկ. 156.

** Մատ. Ս. Էջմ. № 558/590. 202ա. Թումայ վարդապետին է.

«Արդ ես մեղապարտս ի ծնունդս եկեղեցւոյ Թումայ անուն պիտակ վր՟դպ ի Բաջբերունեաց գաւառէ ի ս՟ր ուխտէն Մեծոփայ. ի կարգէ աշակերտաց մեծ վարժապետացն Սարգսի եւ Վարդանայ եւ Գր՟գրի Տա-